ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Р Е Ц Е Н З И И

ԼԵՆԻՆՅԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՈՒՂՂՎԱԾ ՌԵՎԻԶԻՈՆԻԶՄԻ ԴԵՄ

Կոմունիզմի արդի թշնամիները վերջին տարիներին սկսել են իդեոլոգիական մի արշավանք՝ ուղղված սոցիալիզմի և կոմունիզմի խոշորագույն հաղթանակների տեսական հիմքը հանդիսացող մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ ուսմունքի դեմ։ Մարքսիզմի ժամանակակից ռևեգատներն ու ռևիզիոնիստներն ամեն կերպ փորձում են անվանարկել մարքսիզմ-լենինիզմը, հայտարարելով այն «հնացած» և ներկայումս հասարակության զարգացման համար իր նշանակությունը կորցրած ուսմունք։ Նրանք ձգտում են մարքսիզմից դուրս նետել նրա ռևոլյուցիոն ոգին և ոչնչացնել բանվոր դասակարգի ու աշխատավոր ժողովրդի հավատը դեպի սոցիալիզմը։ Խոսքով միայն հանդես գալով սոցիալիզմի օգտին, ժամանակակից ռևիզիոնիզմը ճիգեր է անում ապացուցելու, որ անցումը սոցիալիզմին հնարավոր է առանց պրոլետարական ռևոլյուցիայի, առանց պրոլետարիատի դիկտատուրայի, առանց մարքսիստական-լենինյան տիպի պարտիայի ղեկավարության։ Նրանք ժխտում են պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները, մերժում են պարտիական շինարարության մեջ ամենակարևորը՝ դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքը, ցանկանալով կոմունիստական պարտիան մարտական կազմակերպությունից դարձնել ինչ-որ դիսկուսիոն ակումբ, որտեղ թույլատրելի լինի առանձին ֆրակցիաների գոյությունը և ամեն ոք կարողանա արտահայտել մարքսիզմ-լենինիզմին թշնամի գաղափարներ։ Միաժամանակ ռևիզիոնիստները փորձում են սրոգել դասակարգային անհաշտելի հակամարտությունները կապիտալիստական հասարակարգում, ժխտել իմպերիալիստական պետության շահագործողական և ագրեսիվ էությունը։ Ըստ էության պաշտպանելով կապիտալիստական կարգերը, նրանք «ժողովրդական կապիտալիզմի» շինծու թեորիայի օգնությամբ փորձում են սրողել կապիտալիզմի և սոցիալիզմի միջև գոյություն ունեցող արմատական տարբերությունը։ Նույնքան կեղծ մի այլ ուսմունքի՝ «ազգային կոմունիզմի» «թեորիայի» օգնությամբ նրանք ձգտում են ժխտել տարբեր երկրներում կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ընդհանուր օրինաչափությունների առկայությունը։

Պետական քաղաքական հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց մի ժողովածու[1], կազմված Վ. Ի. Լենինի այն կարևորագույն երկերից, որոնք ուղղված են ռուսական և միջազգային բանվորական շարժման մեջ երևան եկած ռևիզիոնիզմի դեմ։

Ներկայումս, երբ ամբողջ աշխարհի կոմունիստական ու բանվորական պարտիաները ջանք չեն խնայում կոմունիստական շարժման գլխավոր վտանգ հանդիսացող ժամանակակից ռևիզիոնիզմի դեմ մղվող պայքարում, այդ ժողովածուի հրատարակումը առավել մեծ նշանակություն է ստանում։

Ժողովածուի մեջ մտած նյութերը ցույց են տալիս, թե ինչպիսի հմտությամբ և խորությամբ մեր մեծ առաջնորդ Լենինը ժամանակին մերկացրել է ռևիզիոնիզմի պատմական, սոցիալական և տեսական արմատները։ Նրանք միաժամանակ ընթերցողին օգնում են տեսնելու այն հետևողական պայքարը, որ մղել է կոմունիստական պարտիան Լենինի ղեկավարությամբ՝ ընդդեմ ռեոլյուցիոն մարքսիզմի սկզբունքներից ամեն մի նահանջի, ընդդեմ այն բոլոր գործիչների, ովքեր մարքսիզմը «շտկելու» կամ «ներդգելու» պատրվակով ձգտում էին դուրս մղել, ոչնչացնել նրա ռևոլյուցիոն ոգին։

Ռևիզիոնիզմը նոր երևույթ չէ։ Որպես քաղաքական հոսանք նա երևան է եկել դեռևս անցյալ դարի վերջերին, երբ բանվորական շարժման մեջ մարքսիզմի հաղթանակը ստիպում էր նրա հակառակորդներին քողարկվել և հանդես գալ իբրև մարքսիստներ։ Բնորոշելով մարքսիզմի դեմ բուրժուազիայի և նրա իդեոլոգների մղած պայքարի էտապները, Լենինը նշում էր, որ հեռևոլոգական մարքսիստների պայքարը ընդդեմ Բեռնշտայնի գլխավորած ռևիզիոնիստական հո-

---

[1] *В. И. Ленин*, Против ревизионизма. Госполитиздат, Москва, 1958.

սանքի, սկսվում է XIX դարի 90-ական թվականներից։ Ընդգծելով, որ մարքսիզմի տարածումն ու ամրապնդումը բանվոր դասակարգի մեջ անխուսափելիորեն առաջ է բերում բուրժուական գաղափարախոսության ակտիվ հականերգործությունը, Լենինը գրում էր. «մարքսիզմի գաղափարական պայքարը ռևիզիոնիզմի դեմ XIX դարի վերջում, հանդիսանում է պրոլետարիատի ռևոլյուցիոն մեծ մարտերի լոկ նախագուռը»[1]։ Պատմությունը ցույց տվեց Լենինի և՛ այս կանխագուշակման լիակատար ճշմարտությունը։

Ռևիզիոնիզմի երևան գալու հենց սկզբից Լենինը ցույց տվեց, թե նա ինչպիսի վտանգ է ներկայացնում բանվորական շարժման համար և ամենախիստ քննադատության ենթարկեց Բեռնշտայնի ու նրա հետևորդների տեսակետները։ Ռևիզիոնիստներին համարելով միջազգային բուրժուազիայի գործակալներ բանվորական շարժման մեջ, Լենինը նշում էր, որ ռևիզիոնիզմը բուրժուազիայի ամենակարևոր զենքերից մեկն է՝ կազմակերպված բանվորական շարժումը ներսից քայքայելու համար։

Ժողովածուի մեջ մտած մի շարք աշխատություններում («Ռուսական սոցիալ-դեմոկրատների բողոքը», «Դոգմատիզմը և «քննադատության ազատությունը», «Մարքսիզմը և ռևիզիոնիզմը», «Մարքսիզմի պատմական զարգացման մի քանի առանձնահատկությունների մասին», «Կարլ Մարքսի ուսմունքի պատմական բախտը», «Մարքսիզմը և ռեֆորմիզմը» և այլն) Լենինը ցույց է տալիս, որ ռևիզիոնիզմը պատահական երևույթ չէ։ Ռևիզիոնիզմի առաջացումը արդյունք է այն բանի, որ բուրժուազիան, հանուն իր գերիշխանության պահպանման, ստիպված է փոխել բանվորական շարժման և մարքսիզմի դեմ մղած իր պայքարի մեթոդները, դիմել նորանոր զենքերի օգնությանը։ Այդպիսի գաղափարական զենքերից մեկն էլ հենց ռևիզիոնիզմն է, որի հիմնական նպատակն է ներսից պառակտել միջազգային բանվորական շարժումը։ «Ռևիզիոնիզմի անխուսափելիությունը,— գրում է Լենինը,— պայմանավորված է նրա դասակարգային արմատներով՝ ժամանակակից հասարակության մեջ»[2]։

Ռևիզիոնիզմի սոցիալական հենարանը հանդիսանում է մանր բուրժուազիան։ Նրա առաջացման պատճառներից մեկն էլ այն է, որ բանվոր դասակարգի հիմնական, կադրային միջուկից բացի, նրա կազմի մեջ մտնում են նաև քայքայված մանր բուրժուազիայի և ինտելիգենցիայի որոշ տարրեր, որոնք իրենց հետ բերում են մանր բուրժուական տեսակետներ ու ձգտումներ։ Թափանցելով բանվոր դասակարգի շարքերը, մանր բուրժուական այդ տեսակետները տատանումներ ու թեքումներ են առաջ բերում տեսության և տակտիկայի բնագավառում, հիմք են դառնում տարբեր տեսակի օպորտունիստական հոսանքների համար։ Վերջիններս ամրապնդելու նպատակով բուրժուազիան չի խնայում ոչ մի միջոց, ընդհուպ մինչև բանվորական վերնախավի բացարձակ կաշառումը, ձգտելով այդ կաշառված մարդկանց դարձնել բուրժուական իդեոլոգիայի տարածողներ՝ բանվորական շարժման մեջ։

Ժողովածուի մեջ մտած լենինյան աշխատությունների մի մեծ խումբ («12 տարվա ընթացքում» ժողովածուի առաջաբանը, «Վիհելի հարցեր», «Գերմանական բանվորական շարժման որ կողմերը չպետք է ընդօրինակել», «Մարքսիզմը և լիկվիդատորականությունը» ժողովածուի վերջաբանը, «Միասնության խախտման մասին, որը քողարկվում է միասնության մասին ճիչերով» և այլն) նվիրված է ռևոլյուցիոն մարքսիստների պայքարին՝ ընդդեմ ռևիզիոնիստական և օպորտունիստական այն բոլոր թեքումների ու տատանումների, որոնք երևան էին եկել Ռուսաստանում բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիայի հասունացման և զարգացման ժամանակաշրջանում։ Նրանցում Լենինը հետևողականորեն ու անխնա մերկացնում է էսեռների, մենշևիկների, անարխիստների, տրոցկիստների, աջ օպորտունիստների «տեսություններին» ռևիզիոնիստական, հակամարքսիստական էությունը։

Որ մի շարք աշխատությունների մեջ Լենինը խիստ քննադատության է ենթարկում պետության վերաբերյալ անարխիստական և օպորտունիստական տեսակետները։ «Երիտասարդության ինտերնացիոնալը» հոդվածում և «Պետություն և ռևոլյուցիա» գրքի 6-րդ գլխում նա մերկացնում է այդ հարցի նկատմամբ անարխիստների և տարբեր տիպի օպորտունիստների «ուսմունքների» ռեակցիոն, բանվոր դասակարգի ազատագրական պայքարի համար վտանգավոր էությունը։ Եթե օպորտունիստները խեղաթյուրում էին մարքսիզմի ուսմունքը այն մասին, որ պրոլետարական ռևոլյուցիայի ընթացքում անհրաժեշտ է ոչնչացնել հին պետական ապարատը և փոխարինել այն նոր, բանվորական իշխանությամբ, ապա անարխիստները առաջ էին քաշում առհասարակ պետության ոչնչացման հարցը։ Լենինը ցույց է տալիս, որ թե՛ օպորտունիստները և թե՛ անարխիստները ըստ էության ժխտում էին պրոլետարիատի դիկտատուրայի ան-

[1] *В. И. Ленин.* Против ревизионизма, էջ 94։

[2] Նույն տեղում, էջ 93։

հրաժեշտությունը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում և հանդես էին գալիս որպես բանվոր դասակարգի ազատագրական պայքարի ներքին թշնամիներ։

Մեր երկրում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակից հետո, ռևիզիոնիստները կատաղի պայքար ծավալեցին նորաստեղծ Սովետական իշխանության, պրոլետարիատի դիկտատուրայի դեմ։ Այդ շրջանում ռևիզիոնիզմի դեմ մղվող պայքարը ամենասերտ կերպով կապված էր երիտասարդ բանվորա-գյուղացիական սոցիալիստական պետության պաշտպանության հետ։ Տխրահռչակ renegat Կարլ Կաուցկին և II Ինտերնացիոնալի մյուս ղեկավարները, աղավաղելով մարքսիստական ուսմունքը պրոլետարիատի դիկտատուրայի մասին, բացարձակ հալածանք սկսեցին սովետական կարգերի, պրոլետարիատի դիկտատուրայի դեմ, հանդես գալով որպես բուրժուական «մաքուր դեմոկրատիայի» ջատագովներ։ Իր մի շարք աշխատություններում («Պրոլետարական ռևոլյուցիան և renegat Կաուցկին», «Նամակ Եվրոպայի և Ամերիկայի բանվորներին», «Թեզիսներ բուրժուական դեմոկրատիայի և պրոլետարիատի դիկտատուրայի մասին», «Մեր ռևոլյուցիայի մասին») Վ. Ի. Լենինը մերկացրեց II Ինտերնացիոնալի պարագլուխների ռևիզիոնիստական վայրահաչություններ հակառևոլյուցիոն էությունը, փայլուն կերպով ապացուցեց, որ բանվոր դասակարգը միմիայն պրոլետարիատի դիկտատուրայի գոյության պայմաններում կարող է հաջողությամբ ճնշել ու չեզոքացնել շահագործողական դասակարգերի դիմադրությունը, իր շուրջը համախմբել աշխատավորական միլիոնավոր զանգվածներին և ձեռնամուխ լինել երկրի սոցիալիստական վերափոխմանը։

Իրենց ռևոլյուցիոն կազմակերպության ստեղծման առաջին իսկ օրերից բոլշևիկները Լենինի գլխավորությամբ հետևողական ու անհաշտ պայքար են մղել մենշևիկների՝ միջազգային օպորտունիզմի և ռևիզիոնիզմի այդ ռուսական գործակալների դեմ, որոնք ձգտում էին մեր երկրում ստեղծել II Ինտերնացիոնալի սոցիալ-դեմոկրատական, ռեֆորմիստական պարտիաների տիպի կազմակերպություն։ Իր գործունեության ողջ ընթացքում Լենինը ղեկավարել է ու ամրապնդել կոմունիստական պարտիան, որպես բանվոր դասակարգի մարտական, առաջավոր ջոկատ ու սովետական ժողովրդի ղեկավարող ուժ, առանց որի անհնար է իրականացնել պրոլետարիատի դիկտատուրան։ Կոմունիստական պարտիայի գերի ու նշանակության մասին մարքսիստական-լենինյան ուսմունքի մշակմանը և այդ հարցում ռևիզիոնիզմի քննադատությանն են նվիրված Լենինի մի շարք կարևոր աշխատություններ, որոնց մի զգալի մասը մտցված է ժողովածուի մեջ («Զախության» մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» գրքի առանձին գլուխները, «Կոմունիստական Ինտերնացիոնալի մեջ ընդունելու պայմանները», «Պարտիայի միասնականության մասին ՌԿՊ X համագումարի բանաձևի սկզբնական նախագիծը» և այլն)։

Ինչպես անցյալ ժամանակներում, այնպես էլ ներկայումս ամեն կարգի ռևիզիոնիստները կատաղի պայքար են ծավալում մարքսիստական-լենինյան ռևոլյուցիոն պարտիաների դեմ։ Եվ դա պատահական չէ։ Բուրժուազիային և բանվոր դասակարգի ներսում բուրժուական իդեոլոգիայի տարածողներին՝ ռևիզիոնիստներին քաջ հայտնի է, որ առանց սեփական մարտական պարտիայի բանվոր դասակարգը ի վիճակի չէ իրականացնել աշխարհի սոցիալիստական վերափոխումը։

Ժամանակակից ռևիզիոնիզմը առավել ցայտուն կերպով արտահայտվում է Հարավսլավիայի Կոմունիստների Միության վերջերս ընդունած ծրագրում և այդ Միության ղեկավարների գործունեության մեջ։ Ինչպես նշել է Ն. Ս. Խրուշչովը. հարավսլավական ղեկավարների ծրագիրը ըստ էության հանդիսանում է աջ սոցիալ-դեմոկրատների ռևիզիոնիստական բազմաթիվ պլատֆորմների վատթար տարատեսակը։

ՍՄԿՊ XXI համագումարի որոշումների մեջ և եղբայրական կոմունիստական ու բանվորական պարտիաների տեսական ու գործնական աշխատանքներում մարքսիզմ-լենինիզմի ռևոլյուցիոն թեորիան ստանում է իր հետագա զարգացումը։ Դա այն կարևորագույն նախապայմանն է, առանց որի անհնարին կլինի սոցիալիստական սիստեմի հաղթանակը, որովհետև մարքսիզմ-լենինիզմի կենսունակությունը և ուժը այն է, որ նա հանդիսանում է մի մարտական գիտություն՝ հասարակության ռևոլյուցիոն վերափոխման մասին, սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման մասին, արտահայտում է բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների ամենակենսական շահերը։

Ինչպես նշված է ՍՄԿՊ XXI համագումարի բանաձևում, հետևողականորեն շարունակելով ռևիզիոնիզմի՝ որպես ժամանակակից պայմաններում կոմունիստական շարժման մեջ գլխավոր վտանգի մերկացումը, կոմունիստական ու բանվորական բոլոր պարտիաները այսուհետև ևս աննահանջ կհետևեն մարքսիզմ-լենինիզմի ինտերնացիոնալիստական մեծ ուսմունքին, կպայքարեն նրա անաղարտության համար, համաշ-

խարհային կոմունիստական ու բանվորական շարժման նոր հաջողությունների համար։

Մեծ Լենինի աշխատությունների այս ժողովածուն հատու զենք է տալիս բոլոր հետևողական մարքսիստների ձեռքը՝ ռևիզիոնիզմի գաղափարական ջախջախման գործում։

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Ս. ՊԱԼԱԹՈՆ, *Սովետահայ գրականություն*, Լաթաքիա, 1958։

Սփյուռքահայ գրականագիտական միտքը, դժբախտաբար, մինչև օրս չի տվել ժամանակակից արևմտահայ գրականության և ոչ էլ սովետահայ գրականության քիչ թե շատ հետևողական գիտական լուրջ վերլուծումը կամ պատմությունը։

Հակոբ Օշականի «Հայ գրականություն»[1] գրքում ժամանակին կատարած ծամածռությունները ընթերցողի մոտ միայն ժպիտ կարող են առաջացնել։ Որքան էլ հեղինակը ջանում է այդ աշխատության մեջ ընդունել լուրջ գիտնականի կեցվածք, այնուամենայնիվ նրա սնոբոս դատողությունները մատնում են սեմինարիստ վարժապետի իր գավառականությունն ու ունայնամտությունը։

Նույնքան զավեշտական են Հ. Օշականի սովետահայ գրականությունը արժեքազրկելու, ոչնչացնելու դոնքիշոտյան ջանքերը. հետագայում նրա կատարած վայրիվերո «դատումներիս» մեջ։ Իր ուսուցչին փորձեց գերազանցել սովետահայ գրականությունը ջախջախելու միմոսային իր ձեռնածվությամբ նաև Մ. Թեոլեոլյանը[2]։

Սփյուռքահայ պարբերական մամուլում եղել են բազմաթիվ բարեխիղճ հոդվածներ՝ նվիրված սովետահայ գրականությանը կամ նրա առանձին գործիչներին։ Լույս է տեսել նաև Ա. Նազարյանի «Սովետահայ գրականության հատկանիշները» գրքույկը[3]։ Սակայն այդ ամենը կամ մասնակի հարցեր շոշափող, կամ թե գրական-հրապարակախոսական բնույթի գործեր են։ Սփյուռքահայ շատ գրողներ ու գրականագետներ, ինչպես նաև գրասեր-հրապարակախոսներ, երբեմն նույնիսկ մարքսիստական մտածողությունից շատ հեռու կանգնած մարդիկ, անկեղծորեն ձգտել են ինքնուրույն կերպով ըմբռնել սովետահայ գրականության զարգացման ընթացքն ու նրա առանձնահատկությունները։ Շատ հաճախ այդպիսի հեղինակների հոդվածներում կարելի է գտնել ճիշտ և արժեքավոր դիտողություններ։

Բառի լայն առումով գիտական խորը հետազոտություն չէ նաև Ս. Պալաթոնի գրախոսվող աշխատությունը։ Հեղինակը գրականության մասնագետ-պատմաբան չէ և գրականության պատմությամբ, որպես հետազոտող, չի զբաղվել առհասարակ։ Գրականության պատմությունը նրան զբաղեցրել է սոսկ որպես գրասերի և գրականության դասատուի։ Նրա այս աշխատությունը սովետահայ գրականության հանրածանոթ փաստերը ամփոփելու, սիստեմավորելու, այն մատչելի ձևով մի գրքույկի մեջ շարադրելու փորձ է միայն։

Ինչպես կարելի է հետևցնել գրքի առաջաբանից, շատ համեստ խնդիր է առաջադրել իրեն հեղինակը. «Ծառայելու... հայ գրողներու ժողովրդականացման սրբազան գործին», կամ «արտասահմանի մեջ, ներկայացնելու հայրենի գրականությունը փոքրիկ հատորով մը, որուն պահանջը վաղուց հետե կը զգացվեր մեր դրպրոցական հաստատությանց և գրականությամբ հետաքրքրվող շրջանակներուն մեջ»։

Ներկա հատորում ներկայացված են սովետահայ գրականության «Բանաստեղծություն և թատերագրություն» բաժինները։

Սովետահայ բանաստեղծության զարգացումը հեղինակը բաժանել է երեք շրջանի։ Առաջինը՝ 1922—1930 թթ., երկրորդը՝ 1930—1941 թթ. և երրորդը՝ 1941—1954 թթ.։ Սովետահայ գրականության նման պարբերացումը (պերիոդիզացիան) իհարկե շատ հեռու է գիտական և ճշգրիտ լինելուց, սակայն այս դեպքում չենք կարող խստապահանջ լինել հեղինակի նկատմամբ, քանի որ սովետահայ գրականության պատմության, ինչպես և առհասարակ մեր գրականության պատմության պարբերացման հարցը դեռևս վեճի առարկա է նաև սովետահայ գրական պատմագրության մեջ։ Մա-

---

[1] Տե՛ս Հ. Օշական, Հայ գրականություն, Երուսաղեմ, 1942։

[2] Տե՛ս Մ. Թեոլեոլյան, Դար մը գրականություն 1850–1950, հ. Բ, էջ 289–517, Կահիրե, 1956։

[3] Տե՛ս Ա. Նազարյան, Սովետահայ գրականության հատկանիշները և հայ ժողովրդի միասնականությունը, Փարիզ, 1954։

[1] Ս. Պալաթոն, Սովետահայ գրականություն, էջ 5։